# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզ
Ալագյազ համայնք, գ. Ալագյազ Հեռ. (039)26-25-85
Էլ. հասցե alagyaz.aragatsotn@mta.gov.am

26.12.2016թ.

*ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ*
*ՊԱՐՈՆ Գ. ԳՅՈԶԱԼՅԱՆԻՆ*

*Ձեզ ենք ներկայացնում Ալագյազ համայնքի ավագանու 19 դեկտեմբերի 2016թ. արտահերթ նիստի թիվ N 48, N49, N50 և N51 որոշումները:*

*Առդիր՝ 6 էջ:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա. ՄՀՈՅԱՆ*

26.12.16
Մուտք № 4/9314-16

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ալագյազ համայնք
ՀՀ Արագածոտն մարզ գ. Ալագյազ Հեռ. (093)26-25-85
Էլ. հասցե alagyaz.aragatsotn@mta.gov.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*19 դեկտեմբերի 2016թվականի N 48*

## ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի և խորհրդակցական մարմնի նախնական համաձայնությունը ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Ալագյազ համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին:
2. Ալագյազ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2016թ. գույքագրման արդյունքները հաստատելու մասին::
3. Ալագյազ համայնքում 2017թ. տեղական տուրքերի և տեղական վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

*Կողմ - 4*　　*Դեմ- 0*　　*Ձեռնպահ-0*

1. Ալոյան Ռազմիկ Արփուտի
2. Ալոյան Սիաբանդ Վազիրի
3. Մախմուդով Ռեզո Սուրիկի
4. Միհոյան Տիգրան Մի

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*　　*ԱԶԻԶ ՄՀՈՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ալագյազ համայնք
ՀՀ Արագածոտն մարզ գ. Ալագյազ Հեռ. (093)26-25-85
էլ. հասցե alagyaz.aragatsotn@mta.gov.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*19 Դեկտեմբերի 2016թվականի N 49*

### *ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով Ալագյազ համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Ալագյազ հանայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը:

*Կողմ - 4* *Դեմ- 0* *Ձեռնպահ-0*

1. Ալոյան Ռազմիկ Արփուտի
2. Ալոյան Սիաբանդ Վազիրի
3. Մախմուդով Ռեզո Սուրիկի
4. Միոյան Տիգրան Միրոյի

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ԱՇԻՐ ՄՀՈՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ալագյազ համայնք
ՀՀ Արագածոտն մարզ գ. Ալագյազ Հեռ. (093)26-25-85
Էլ. հասցե alagyaz.aragatsotn@mta.gov.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*19 Դեկտեմբերի 2016թվականի N 50*

### *ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ 2016թ. ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջով

**Ալագյազ համայնքի ավագանին որոշում է՝**

*Հաստատել Ալագյազ համայնքի սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների գույքագրման արդյունքները համաձայն հավելվածի:*

*Կողմ - 4* *Դեմ-0* *Ձեռնպահ-0*

1. Ալոյան Ռազմիկ Արֆուտի
2. Ալոյան Սիաբանդ Վազիրի
3. Մախմուդով Ռեզո Սուրիկի
4. Միոյան Տիգրան Միրոյի

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ԱԶԻԶ ՄՀՈՅԱՆ*

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի
Ալագյազ համայնքի ավագանու
2016 թվականի Դեկտեմբերի 19-ի թիվ 50 որոշման

ՀՀ Արագածոտն մարզի Ալագյազ գյուղական

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի

# ՑԱՆԿ

| ՀՀ | Շարժական և անշարժգույքի անվանումը | Ենթակայությունը | Տարեթիվ | Քանակը /հատ/ | Ընդհանուր հաշվեկշռային գումարը /հազար դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի շենք | Ալագյազի հ/պ | | 1 | 3835.0 |
| 2 | Բաղնիքի շենք | Ալագյազի հ/պ | | 1 | 4315.0 |
| 3 | Մանկապարտեզի շենք | Ալագյազի հ/պ | | 1 | |
| 4 | Ջրամատակարարման գիծ | Ալագյազի հ/պ | | | 1309.0 |
| 5 | Ջրամատակարարման գիծ դաշտ. | Ալագյազի հ/պ | | | 5370.7 |
| 6 | Բազմաֆունկցիոնալ տպիչ | Ալագյազի հ/պ | | 1 | 110.0 |
| 7 | Ձեռքի խոտհնձիչ | Ալագյազի հ/պ | | 1 | 650.0 |
| 8 | Համակարգիչ | Ալագյազի հ/պ | | 1 | 500.0 |
| 9 | Հեռուստացույց | Ալագյազի հ/պ | | 1 | 70.0 |
| 10 | Խաղասեղան | Ալագյազի հ/պ | | 1 | 80.0 |
| 11 | Դահլիճի աթոռներ | Ալագյազի հ/պ | | 80 | 320.0 |
| 12 | Աթոռներ փափուկ | Ալագյազի հ/պ | | 3 | 15.0 |
| 13 | Ցուցատախտակ | Ալագյազի հ/պ | | 129 | 154.8 |
| 14 | Ցուց. Նրբանցք | Ալագյազի հ/պ | | 7 | 11.2 |
| 15 | Ցուց. Փակուղի | Ալագյազի հ/պ | | 10 | 16.0 |
| 16 | Ցուց. փողոցի | Ալագյազի հ/պ | | 10 | 24.0 |
| 17 | Վահանակ դրսի | Ալագյազի հ/պ | | 1 | 50.0 |
| 18 | Վահանակ | Ալագյազի հ/պ | | 2 | 30.0 |
| 19 | Վահանակ | Ալագյազի հ/պ | | 8 | 80.0 |
| 20 | Կրակմարիչ | Ալագյազի հ/պ | | 2 | 40.0 |
| 21 | Կրակմարիչ | Ալագյազի հ/պ | | 1 | 18.0 |
| 22 | Բահ | Ալագյազի հ/պ | | 3 | 5.1 |
| 23 | դույլ | Ալագյազի հ/պ | | 1 | 1.7 |
| 24 | Կասա երկաթյա | Ալագյազի հ/պ | | 3 | 7.7 |
| 25 | Պատուհանի վարագույր | Ալագյազի հ/պ | | 40մ | 80.0 |
| 26 | Լուսամփոփ | Ալագյազի հ/պ | | 9 | 54.0 |
| 27 | Ցուցանակ դրսի | Ալագյազի հ/պ | | 2 | 10.0 |
| 28 | Անհատական համակարգիչ | Ալագյազի հ/պ | | 1 | 400.0 |
| 29 | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | 17557.2 |

*Ալագյազ համայնքի ղեկավար* *Ազիզ Միոյան*

*Հաշվապահ* *Ալթուն Շամոևա*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ալագյազ համայնք
ՀՀ Արագածոտն մարզ գ. Ալագյազ Հեռ. (093)26-25-85
էլ. հասցե alagyaz.aragatsotn@mta.gov.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*19 Դեկտեմբերի 2016թվականի N 51*

## ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇԵՑ՝**

1.Ուժը կորցրած ճանաչել Ալագյազ համայնքի ավագանու 18 Նոյեմբերի 2016թ.<Ալագյազ համայնքում 2017թ. Տեղական տուրքերի և տեղական վճարների դրույքաչափերը սահմանելու մասին> N46 որոշումը

2.Հաստատել համայնքի տարածքում 2017թ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:

*Կողմ - 4* *Դեմ- 0* *Ձեռնպահ-0*

1. Ալոյան Ռազմիկ Արփուտի
2. Ալոյան Սիաբանդ Վազիրի
3. Մախմուդով Ռեզո Սուրիկի
4. Միոյան Տիգրան Միրոյի

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ԱԶԻԶ ՄՀՈՅԱՆ*

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ
գյուղական համայնքի ավագանու
19 Դեկտեմբերի 2016թ. N51 որոշման

## Ալագյազ Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) Ոգելից եւ ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչեւ 1500 դրամ,
բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչեւ 2000 դրամ

2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչեւ 1500 դրամ,
բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչեւ 2000 դրամ,

3) Համայնքի տարածքում նոր կառուցվող օբյեկտների՝ շենքերի, շինությունների (ներառյալ ժամանակավոր) շինարարություն (շինարարական մոնտաժային աշխատանքներ) սկսելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝
ա) հիմնական օբյեկտների համար՝ 8000 դրամ.
բ) մինչեւ 6 մ2 տարածք զբաղեցնող ժամանակավոր (ոչ հիմնական) շինությունների համար՝ 2000 դրամ.
գ) 6 մ2 եւ ավելի տարածք զբաղեցնող ժամանակավոր (ոչ հիմնական) շինությունների համար՝ 4000 դրամ:

4) Համայնքի տարածքում գտնվող օբյեկտները քանդելու աշխատանքներ սկսելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 5000 դրամ

*Ալագյազ համայնքի ղեկավար՝* *Ազիզ Միոյան*